Արձանագրություն N 2.1

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32 ծածկագրով Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան

06.10.2020թ.
ժամը 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Միրզոյան

Հանձնաժողովի անդամներ՝ Դ. Շատվերյան
Ռ. Եղիազարյան
Աշ. Գրիգորյան
Ար. Գրիգորյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝ Ա. Թևոսյան

1. **Տեղեկություններ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հարցումների և պարզաբանումների մասին**

(Ա. Միրզոյան)

1.1 Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ Երևանի Աջափնյակ համայնքի Արա Սարգսյան 5/1 հասցեում տեղակայված շենքի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայությունների N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2020 թվականի հոկտեմբերի 5-ին ստացվել են հարցումներ:

1.2 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը հաստատում է տրամադրվելիք պարզաբանման հայտարարությունը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ – 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Միրզոյան

Անդամ՝ ---------- Դ. Շատվերյան

---------- Ռ. Եղիազարյան

---------- Աշ. Գրիգորյան

---------- Ար. Գրիգորյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 2.1 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը N ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32

05.10.2020թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ ներկայացված պարզաբանումները.

Հարցադրում

Խնդրում եմ պարզաբանել, վերակառուցման ենթակա շենքի վերաբերյալ առկա է սեյսմանվտանգության եզրակացությունը, թ՞ե ոչ:

Պարզաբանում

Եզրակացությունն առկա չէ: Հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվում է նախագծողի կողմից ձեռք բերել գոյություն ունեցող շենքի տեխնիկական վիճակի ոսումնասիրության /կոնստրուկցիաներում բացումների, ամրանների և բետոնի ամրության լաբորատոր գործիքային հետազոտությունների միջոցով/ նոր եզրակացություն:

Հարցադրում

Կողմնորոշիչ գինը ձևավորվել է հաշվի առնելով շենքի սեյսմանվտանգության եզրակցությունը, եթե այդպիսի եզրակացություն առկա է:

Պարզաբանում

Նախագծման աշխատանքների կողմնորոշիչ գինը ձևավորվել է հաշվի առնելով շենքի սեյսմազինվածության բարձրացման անհրաժեշտությունը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Նազիկ Հարությունյանին:

Հեռախոս՝ 011621821
Էլ.փոստ՝ tender1@minurban.am

ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-20/32 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով